Արևմտեան Հայաստանի Հայոց Համազգային Հայրենիք

ՀՀ-ն պետք է պաշտպանի Արևմտյան Հայաստանի հայերի իրավունքները

Նոյեմբեր 29, 2010թ. 10:00

Նոյեմբերի 27-ին և 28-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում տեղի ունեցա Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի 3-րդ Վեհաժողովը:

Վեհաժողովի ընթացքում քննարկվեցին Արևմտյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի Հայերի իրավունքների հետ կապված բազմաթիվ հարցեր:

Իսկ նոյեմբերի 28-ը, մասնավորապես, նվիրված էր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից Հայաստանի ու Թուրքիայի սահմանը որոշող իրավարար վճռի կայացման 90-ամյա տարելիցին:

Վեհաժողովի աշխատանքներին մասնակցություն ցուցաբերեցին Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի մի շարք ներկայացուցիչներ՝ Ֆրանսիայից, Հայաստանի Հանրապետությունից, Արցախի Հանրապետությունից, Ջավախքից, Ռուսաստանի Դաշնությունից, Եվրոպայի տարբեր երկրներից:

Ստորև ներկայացնում ենք Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի հայաստանյան ներկայացուցչության՝ ‹‹Հայրենականչ›› հայրենասիրական, լրատվական, հասարակական կազմակերպության փոխնախագահ, լեզվաբանության դոցենտ **Ավիկ Մարությանի** ելույթը:

Հարգելի նախագահող, վեհաժողովի հարգելի պատվիրակներ, հարգարժան հյուրեր, թույլ տվեք միանալ այսօր հնչած ողջույններին՝ Արևմտյան Հայաստանի հայերի ազգային խորհրդի 3-րդ վեհաժողովի կապակցությամբ:

Վեհաժողովը կարևոր իրադարձություն է ոչ միայն Արևմտյան Հայաստանի հայերի, այլև ամբողջ հայ ժողովրդի կյանքում: Այս վեհաժողովը նշանակալից է այն առումով, որ փաստում է կարևորագույն մի հանգամանք, այն է՝ մեր բռնազավթված հայրենիքի վերադարձի համար պայքարը երազային-սխոլաստիկ վիճակից վերջնականորեն տեղափոխվել է կոնկրետ մարտավարական հարթություն՝ շնորհիվ Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի նպատակային գործունեության:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող Արևմտյան Հայաստանի հայերիս համար ներկայումս հասունացել է ոչ միայն մեր պատմական պահանջատիրության, այլև հենց Հայաստանում մեր շահերի պետական պաշտպանության ռազմավարական ծրագրի անհրաժեշտության հարցը: Մի բան, որ հնարավոր չէր պատկերացնել բոլշևիկյան բռնատիրության տասնամյակների ընթացքում: Սա է պատճառը, որ երկարուձիգ տարիներ մենք զրկված ենք եղել մեր իրավունքները միջազգային իրավունքի ատյաններում

պաշտպանելու հնարավորությունից: Հիմա այլ ժամանակներ են, հիմա ունենք Հայաստանի քսանամյա անկախ Հանրապետություն, որը պարտավոր է միջազգային ասպարեզում հստակ ներկայացնել ու պաշտպանել մեր պատմական իրավունքները: Դրա համար կան իրավական բոլոր հնարավորությունները:

Պատահական չէր Արևմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի՝ նոյեմբերի 21-ին հրավիրած գիտաժողովը՝ նվիրված ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար հայտնի փաստաթղթի 90-ամյակին: Հայաստանի Հանրապետությունում ևս այդ հարցին նվիրված գիտաժողովներ կազմակերպվեցին, և առաջին անգամ Սևրի պայմանագրին անդրադարձավ հանրապետության նախագահը: Սա ողջունելի սկիզբ է:

ԱՄՆ-ն աշխարհում հանդես է գալիս միջազգային իրավունքի և պետական պարտավորությունների կատարման երաշխավորի դիրքերից և դրանց պաշտպանության անհրաժեշտությամբ է նաև պատճառաբանում աշխարհի տարբեր հատվածներում իր ռազմական ներկայությունը: Ուրեմն, պարտավոր է նաև հարգել նախագահ Վիլսոնի ստորագրած և ԱՄՆ մեծ կնիքով վավերացված իրավագիրը, որն, ի դեպ, վաղեմության ժամկետ չունի: Տեսանելի ապագայում մեր մաժովորդական թերևս ամենամեծ անելիքը այդ պայմանագիրը կյանքի կոչելն է և ստորագրած պետություններից պահանջելը, որ հարգեն ու կատարեն ստանձնած պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող Արևմտյան Հայաստանի հայերի հետնորդները հարկ է, որ միավորվեն, ստեղծեն միասնական դաշինք և իշխանություններից պահանջեն ճանաչել իրենց իրավունքները: Տարանջատ գործունեությունը, որքան էլ նվիրյալ լինեն դրան լծված անհատները, ցանկալի արդյունք չի տա: Այս իմաստով Արևմտյան Հայաստանի հայերի հետնորդների միավորումը մեկ միասնական ճակատում, դարձել է անհրաժեշտություն:

Հենց այս նպատակով է ստեղծվել ‹‹Հայրենականչ››, հայրենասիրական կազմակերպությունը, որը Արևմտյան Հայաստանի հայերի ազգային խորհրդի ներկայացուցչությունն է Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության նախագահն է Ազգային խորհրդի հիմնադիր անդամ Արմենակ Աբրահամյանը: Ես նույնպես պատիվ ունեմ ներկայացնելու այդ կազմակերպությունը: Եվ, օգտվելով առիթից, ցանկանում եմ կոչ անել Արևմտյան Հայաստանի հայերի՝ ՀՀ-ում բնակվող հետնորդներին միավորվել մեզ հետ՝ անկախ նրանից, թե որ կազմակերպությունն են ներկայացնում, որպեսզի կարողանանք միասնական ջանքով հասնել մեր իրավունքների լիակատար ճանաչմանը:

Մենք միջազգային իրավունքի տեսակետից այսօր լիարժեք հիմք ունենք պայքարելու հանուն մեր հայրենիքի ազատագրման, որը շարունակում է բռնազավթված մնալ Թուրքիայի կողմից:

Երբ խոսում ենք Արևմտյան Հայաստանի մասին, Արևմտյան Հայաստանի բնիկների մասին, պիտի իսպառ մոռանանք «ազգային փոքրամասնություն» բառակապակցությունը: Հայերն իրենց հայրենիքից տեղահանված բնիկներն են, ովքեր միջազգային իրավունքի ընդունված նորմերով հստակ իրավունքներ ունեն, որոնցից մեկն էլ պահանջատիրությունն է՝ իրենց բռնազավթված հայրենիքի վերադարձի պահանջը՝ բոլոր տեսակի վնասների հատուցմամբ: Թուրքիայի հետ հարաբերությունների հիմքը միջազգային իրավունքի դաշտն է. խոսքս, բնիկ ժողովուրդների մասին ՄԱԿ-ի համապատասխան հռչակագրի մասին է:

2007 թվականի սեպտեմբերի 13-ին ՄԱԿ-ն ընդունեց «Հռչակագիր բնիկ ժողովուրդների իրավունքների մասին», որը, դժբախտաբար, շարունակում է գրեթե անծանոթ մնալ հայ հանրությանը: Միակ հայկական կազմակերպությունը, որն արձագանքեց Հռչակագրին և գրանցվեց ՄԱԿ-ում, «Արևմտյան Հայաստանի հայերի համագումարն» է: ՄԱԿ-ի հռչակագիրը

վերաբերում է Արևմտյան Հայաստանի հայերին: Այսինքն, իրողությունն այն է, որ մեր իրավունքները ճանաչված են ՄԱԿ-ի կողմից: Արևմտյան Հայաստանի հայերի հայրենիքն Արևմտյան Հայաստանն է:

Մենք պարտավոր ենք մեր շահերը պաշտպանել հենց այս դիրքերից՝ իբրև բնիկ ժողովուրդ, օգտվելով այն հանգամանքից, որ հռչակագիրը ստորագրել է նաև Թուրքիան: Հետևապես, պարտավոր է կատարել նրանում ներառված դրույթները:

ՄԱԿ-ի 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունած հռչակագրի 1-ին հոդվածով ամրագրված է. ‹‹Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի շրջանակներում նրանք կարող են ազատորեն որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և ապահովել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը››:

Նույն հռչակագրի 2-րդ հոդվածում ասված է. ‹‹Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար իրավունք ունեն ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունները և ռեսուրսները››, և ապա՝ ‹‹Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկված լինել իրեն պատկանող գոյության միջոցներից››:

Մինչդեռ Թուրքիայի կողմից մեր հայրենիքը զավթելուց հետո աշխարհագրական այդ ամբողջ տարածքում շարունակում են ոտնահարված մնալ բնիկ ժողովրդի բոլոր իրավունքները: Մենք այսօր պարտավոր ենք Թուրքիայի հետ խոսել հենց այդ իրավունքների պաշտպանության դիրքերից:

Խոսքս չծանրաբեռնելու համար այլ հռչակագրեր չեմ հիշատակում, բայց այնպիսիք, որոնցում ներառված դրույթների վրա մենք լիովին կարող ենք հենվել միջազգային ատյաններում, շատ ավելին են:

Պետք է գործել նախահարձակ ձևով, այլ ոչ թե բավարարվել քաղաքական իրողություններին լոկ արձագանքողի անհեռանկար կարգավիճակով:

Համոզված եմ՝ բոլորիս նպատակը նույնն է: Մասնատված հասարակությամբ, քինախնդիր վարքով այս աշխարհում հարցեր չեն լուծվում: Ուրեմն, մաղթում եմ բոլորիս միասնություն և հաստատակամություն: Այդ դեպքում արդեն մեր հաղթանակը կլինի անպայման:

Շնորհակալություն:

Արևմտեան Հայաստանի Հայոց Ազգային Խորհուրդ
Conseil National des Arméniens d'Arménie Occidentale
BP 61
92224 BAGNEUX CEDEX - FRANCE
e-mail : haybachdban@wanadoo.fr